

# ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

## ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻ 4-6

ԱՊՐԻԼ-ՅՈՒՆԻՍ

42. ՏԱՐԻ 1952

### ՌԵՏՈՒՆԵԱՅ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԵՐ

1. ՌԵՏՈՒՆԵԱՅ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԾԱԳՈՒՄԸ

Ռչտունեաց նախարարութեան ծագումը կամ սկզբնաղբուրթեան պատմութիւնը մուտ է. — հայկական նախարարութիւններէն շատ սակաւներու ակնադրուին արդէն ստուգապէս երեւան հանուած է:

Մովսէս Խորենացին Ռչտունեաց նախարարութիւնը Սիւնիքէն յառաջագայտ՝ տեղեկացած է եղեր՝ «ՁՌչտունիս եւ գԳոդթնացիս գտի պատմեալ ի Սիսականէն արդարեւ հատուած. ոչ գիտեմ՝ թէ յանուն յարանցն զգաւառան անուանեն, թէ յանուն գաւառացն զնախարարութիւնս կոչեցեալ» (Պատմութիւն Հայոց, Վենետիկ 1881, էջ 177. հմմտ. Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ 1885, էջ 36): Սամուէլ Անեցին հայ պատմահօր նախադասութիւնը գրեթէ կը կրկնէ, սակայն անունները քիչ մը փոփոխած, այս է՝ Ռչտունին՝ Ռուչտունի եւ Գոդթնացին՝ Գոդրանցի (Ժամանակագրութիւն, Վաղարշապատ 1893, էջ 49):

Հ. Ինճիճեան Խորենացիին խօսքերէն սակարակացութիւնը կը հանէ՝ թէ Ռչտունիները Գեղամի Սիսակ որդիէն սերած ըլլան (Հնաստութիւն, Բ., Վենետիկ 1835, էջ 183): Մինչ Հ. Ալիշան զանոնք անելի կ'ընդլայնէ՝ «Ընդ յառաջագէժս յիշխանագանց հանդիսացան երբեմն եւ Ռչտունիք ի Ռաշտայ ումեքէ սերեալք, որ ի Սիսականաց անտի ըստ Խորենացոյ, եւ ի Վաղարշակայ ամբարձան ի գահ» (Այբարատ, Վենետիկ 1890, էջ 428): Իսկ Գարագաշեան կը գրէ՝ «Անաշտո գատատանաւ անհնար է մեզ նախարարութեանց հաստատութեան պատմութիւնն ի ձեռն Վաղարշակայ իբրեւ առաջին թագաւորի ընդունիլ, այլազգ, բայց եթէ մեծաւ մասամբ իբրեւ հայրենասիրական հնարք» (Քննական Պատմութիւն, Ա., Թիֆլիս 1895, էջ 259):

Ծանօթ է Ռաշաձ Ռչտունի անունը (տես վարը), սակայն զայն Ռչտունի անունն արմատ դիւրաւ կարելի է հանուել եւ հե-

տեւցնել՝ թէ սոյն տոհմին նախահայրն եղած ըլլայ Ռաշաձ եւ անոր անունովը՝ զարմը Ռչտունի յորջորջուած: Իսկ Հ. Ալիշան գիտէ Ռաշատ անունը (հմմտ. վերը) եւ անկէ կը սերեցնէ Ռչտունիները, սակայն անոր մասին տեղեկութիւն չ'աւանդեր — գտած է այդ անունը գրութեան մը մէջ, թէ կը խորհի վերջինին մէջ՝ բառին արմատը գտնել, ինչպէս եւ՝ անոր նախահայրը: Կը մտածեմ թէ Ռաշաձ անունը՝ Ռաշատ գրչութեամբ գտած ըլլայ ձեռագրի մը մէջ եւ զայն նախընտրած, վասն զի միջին մեթոդեան երկաթագրի մէջ մ եւ տ դիւրաւ կրնան շփոթուիլ:

Ռչտունեաց գաւառին մէջ կայ Մահոշա ջաղաքաւանը, որուն մերձ Մանածիհր Ռըտունին Յակոբ Մծրնացիին սարկաւազները խնայունեաց ծովը նետել կը հրամայէ: Կը միտիմ ենթադրել այդ անունը իբր զոյգ անուններու միացումը՝ Ման(ածիհր) եւ Ռաշտ (Ռչտունի): Սակայն Ռաշտ բառ ու անուն ինձի անծանօթ են եւ ձեռքիս տակ եղած լաւ Բառարաններու մէջ չտեսայ: Նաև Ռաշտ՝ Ռըշտի կամ Ըոըշտի վերածելն ալ այնքան դիւրաւ ներելի է: Միայն թէ ունինք Ագաթանդեգոսէն (Պատմութիւն, Վենետիկ 1862, էջ 597) եւ Սամուէլ Անեցիէն Ռուչտունիք<sup>1</sup> (հմմտ. վերը) ձեւը, որ Ռուչտարմատը իբրեւ ընդունելի կը ցուցնէ: Ծանօթ է «Ռուչտ» անյայտ իմաստով բառը, որ առանձին գործածուած է. «Արանից ունենք միայն արիւնոուչտ, արիւնըոուչտ» (Աճառան Հ., Արմատական Բառարան, Երեւան 1932, Ե., էջ 1235): Կան նմանապէս «Ռաչիկ» եւ «Ռըչիկ» բառերը, «Հաւանօրէն Վընըչիկ ցեղական անունից, իբրեւ վընըչիկ տրեխ» (Ս. Մալխասեան, Հայերէն բացատրական Բառարան, Երեւան 1945, Բ., էջ 157), մինչ «Վըչիկ Ռչտունից ազաւա-

<sup>1</sup> Ա. Աբրահամեանի հրատարակած Անանիա Շիրակացիի Աշխարհագրութեան մէջ կայ՝ «Վաստղուրական ի մտից է Պարսկաստանց եւ առ երբ կործէից: Գատաք նորա երեսուն եւ հինգ եւ այսօրիկ՝ Ռչտունիք, Տոսք, Բոզունիք...» (հմմտ. Անանիա Շիրակացու, Մատենագրութիւնը, Երեւան 1944, էջ 349—350):

դուած՝ 1. Ռշտունեաց եւ Մոկաց դաւառների բնակիչ. Ռշտունցիների ժողովրդական անունն է՝ Վոչիկ 2. տրեխ (անդ, էջ 353. հմմտ. եւ Աճառեան, Հայերէն գաւառական բառեր, Թիֆլիս 1913, էջ 1004. հմմտ. նաեւ Հայրենիք, օրագիր, 1951, Թ. 11931): Նկատի կարելի է առնուլ նաեւ ռիշտ բառը, որ ունի ժլատ, կծծի իմաստը: Խորենացիական ստուգարանութեամբ (արծիւ ունիս, գինի ունիս, Գին) գուցէ ցեղին նախահօր ազահուիթենէն՝ տոհմը սոյն յորջորջանքը ստացած ըլլայ: Նոյն իսկ, ինչպէս Սլաք ու Վարաժ անուն անձերէ կը սերին Սլիուներ և Վարաժուներ, այսպէս գուցէ Ռուշտ, Ռաշտ, Ռաշիտ, Ռիշտ անձէ մը՝ Ռշտունիք: Հ. Հիւրջման սոյն զարմին անունին կազմիչ մասեր կը համարի ուշտ, ռիշտ կամ ուշտ-ունիք, ոյնիք (հմմտ. Հին Հայոց տեղւոյ անունները, Վիեննա 1907, էջ 210—211):

Հաւանական վարկած կը համարիմ՝ թէ Ռշտունի նախարարութիւնը ուրարտական ծագում ունի եւ կարելի է զայն միացնել Ռիշուանի հետ (մերձաւոր Ռիշտունի) եւ պէտք է ըսել, թէ Ռշտունի անունը ուրարտական անուններու հետ շատ նմանութիւն ունի (Ռուշաս<sup>2</sup>, Սարգուրիչ, Իշպուրիչ, Արգիշտիչ), եւ թէ Ռշտունիներու հոգերը ուրարտական աշխարհի մէջ են (Բանասէր, 1902, Թ. 8—9, 10. Կ. Բամաճեան, Իսկական Պատմութիւն Հայոց, Կ. Պոլիս 1914, էջ 56—57. Սկանակ Բանասէր, Պատմութիւն Հայոց ի սկզբանէ մինչեւ ցԱրշակունիս, Պարիս 1903, էջ 25. Գ. Ղափանցեան, Պատմութիւն Ուրարտուի, Երեւան 1940, էջ 46 ու 178. հմմտ. եւ Գնունեաց մասին գրածներս):

2. ՌՇՏՈՒՆԵԱՅ ԲԱՐՁՆ ՈՒ ՊԱՇՏՈՆԸ

Վրամական Գահնամակը այսպէս կը սկսի՝  
«Առաջին իշխան Հայոց եւ Մաղխազն,  
Ա. Միւնեաց տէր,  
Բ. Ասպեան,

<sup>2</sup> Ասլան Գ.՝ Rusas, Rousas կամ Ursa անունները կը խորհի թէ կարելի է նոյնացնել Ռշտունիի հետ (Etudes Historique sur le peuple Arménien, Paris 1928, էջ 36, ծն. 2): Իսկ Honigmann Ernest (Vasilieu A. A. Byzance et les Arabes, Tome III. Die Ostgrenze des Byzantinischen Reiches, von 363—1051, Bruxelles 1935, էջ 21) կը կարծէ թէ Res'aina Ռշտունիք ըլլայ: Հմմտ. Ազոնցի մօտ Ri-suaini, Ruisiani-é, նաեւ Rašuni յատուկ անունները (M. Adon, Histoire d'Arménie. Paris 1946, էջ 178, 173, 211):

Գ. Արծրունեաց տէր,  
Դ. Մամիկոնէից տէր,  
Ե. Շահապն Ծովաց տէր,  
Զ. Մոկաց տէր,  
Է. Ռշտունեաց տէր,  
Ը. Վահունեաց տէր,  
Թ. Կասպից տէր,  
Ժ. Անձեւացեաց տէր» եւն եւն (Հ. Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ 1890, էջ 430):

Ինչպէս ակնհայտ է՝ Ռշտունիներու բարձն ու աստիճանը շատ պատուաւոր է եւ բարձր: Ալիշան կը գրէ՝ «Ի Վաղարշակայ ամբարձան (Ռշտունիք) ի դահ, ընդ պատուաւորս դասին եւ յԱգաթանգեղեաց եւ թէպէտ ի յետին դարս միոյ լուրջ գաւառի տէր ճանաչի տէրն Ռշտունեաց, այլ ի հնունմ ընդարձակ երկրի եւ ժողովրդեան» (անդ, էջ 428):

Պատմագիրները, ինչպէս վերը միոյն համար Հ. Ալիշան կը հաւաստէ, կու գան հաստատելու Գահնամակին դասաւորումը:

Ագաթանգեղոս՝ Գրեգոր Լուսաւորչի շքադիր նախարարներու ցանկը կու տայ այսպէս՝ 1. Իշխանն Անգեղ տան, 2. Իշխանն Աղձնեաց, 3. Իշխանն Մարգպետութեան, 6. Իշխանն Կորդովտաց, 7. Իշխանն Ծովաց, 8. Իշխանն Գաղարացոց, 9. Իշխանն Ռուշտունեաց, 10. Իշխանն Մոկաց, 11. Իշխանն Միւնեաց» եւն եւն (տպ. Վենետիկ 1862, էջ 597):

Փաւստոս Բուզանդ Վաչէ Մամիկոնեանի նիգակակիցներ կ'անուանէ՝ 1. Բագարատ Բագրատունի, 2. Մեհենդակ Ռշտունի, 3. Գարեգին Ռշտունի, 4. Վահան Ամատունի, 5. Վարազ Կամենական (Պատմ. տպ. Վենետիկ 1889, էջ 17): Նա Մ. Ներսէսի ուղեկից գիտէ՝ 1. Մարգպետ, 2. Բագարատ ասպարապետ, 3. Դանիէլ իշխան Ծովաց, 4. Մեհենդակ Ռշտունի, 5. Անդովկ Սիւնի, 6. Արշաւիր Արշարունի, 7. Նոյն Ծովաց, 8. Պարգեւ Ամատունի (անդ, էջ 72): Իսկ Փառն Կաթողիկոսին շքադիր են՝ «Մեծք եւ գլխաւորք նահապետք»՝ 1. Վասակ Մամիկոնեան, 2. Մեհենդակ Ռշտունի, 3. Անդովկ Սիւնի, 4. Արշաւիր Կամսարական (անդ, էջ 44):

Խորենացին Տրդատի բանակին բաժանումը նախ կը զնէ՝ 1. Միհրան առաջնորդ Վրաց, 2. Բագարատ ասպետ, 3. Մանածիւր Ռշտունի, 4. Վահան Ամատունի (Պատմ., էջ 357), սակայն այլուր գրեթէ հակառակ կը

չըջէ՝ 1. Բագարատ Ասպետ, 2. Միհրան առաջնորդ Վրաց, 3. Վահան Ամատունի, 4. Մանածիւր Ռշտունի (անդ, էջ 407):

Ղազար Փարպեցին Յաղկերտի հրամանով ու հրաւիրով Պարսկաստան գացող նախարարներու անուանացանկը կը ներկայացնէ՝ 1. Վասակ Սիւնի, 2. Ներշապուհ Արծրունի, 3. Արտակ Ռշտունի, 4. Գատիչոյ Խորխոռունի, 5. Վարդան Մամիկոնեան, 6. Արտակ Մոկացի, 7. Մանէճ Ապահունի, 8. Վահան Ամատունի (Պատմ., Վենետիկ 1933, էջ 143): Նոյն անուանացանկը կը կրկնէ նմանապէս Նղիշէ (Պատմ., Վենետիկ 1893, էջ 76) որ ուխտադրուծ եւ Վասակի հետեւող նախարարներու անունները սա կարգով կը յիշէ՝ 1. Արտակ Ռշտունի, 2. Գատիչոյ Խորխոռունի, 3. Գիւտ Վահեւունի, 4. Տիրոց Բագրատունի, 5. Մանէճ Ապահունի, 6. Արտէն Գարեղենից, 7. Ընջուղ Ակէոյ, 8. Ներսէհ Ուծայ (անդ, էջ 172. հմմտ. դեռ Գ. Տէր-Պողոսեանի կազմած համեմատական տախտակները, Հանդէս Ամսօրեայ, 1895, էջ 22, 58—59, դարձեալ՝ հմմտ. Հ. Ս. Կոզեան, Կամսարականները, Տեաք Շիրակայ եւ Արշարունեաց, Վիեննա 1926, էջ 48—61):

Երբ այս համեմատական տախտակները յառաջ կը բերեմ՝ չեմ ուզեր հետեւցնել ուրեք՝ թէ հայ պատմագիրները նախարարներն ու անոնց ազգատոհմը յիշատակած ժամանակ՝ միշտ անոնց աստիճանը նկատի առած ու այնպէս անունները շարած ըլլան: Սակայն չէ ալ կարելի վարկանիլ, որ անոնք զանոնք յառաջ բերած են՝ ինչպէս որ զըջին ծայրին եկած ըլլան: Որոշ ուշադրութիւն մը կարելի չէ չենթադրել: Այս պարագան, Գահնամակը ու պատմական անցքերը կը հաստատեն Ռշտունի նախարարութեան աւաղութիւնն աւ արժէքը՝ 3:

Ռշտունեաց նախարարութիւնը հայ բունակին կու տար 1000 այր պատերազմող եւ պաշտպան հայրենիքին (Ալիշան, Այրարատ, էջ 424—425): Եւ ստէպ՝ նմանապէս առաջնորդ ու զօրավար: Այնպէս որ Պատմագիրներու տուեալներէն Ալիշան կ'եզրակացնէ «Մեծն Տրդատ (եւ ուրիշ թագաւորներ) ի նախնին արար գառաջնորդութիւն հարաւային բանակին Հայոց» (անդ, էջ 428):

<sup>3</sup> Սակայն չորս հարիւր Բարձրուն մէջ շատ վերջեր կը յիշուին (հմմտ. Սոփերք, 2: — Մեարտի Երէց, Պատմութիւն Ս. Ներսէսի հայրապետի Հայոց, Վենետիկ 1853, էջ 33):

Ռշտունի նախարարներու եւ զօրավարներու անունները եւ գործունէութիւնը պիտի տեսնենք ստորեւ, իսկ «Առաջին անգամն է որ Ռշտունեաց նախարարական տոհմը տեսնում ենք սպարապետութեան պաշտօնում»<sup>4</sup>: Թէոփրոս այդ պաշտօնն ստացել էր Պարսից թագաւորից, որի արքունիքումն էլ նա մեծացել էր շատ նախարարական տոհմերի նման» (Լէօ, Պատմ. Հայոց, Բ., Երեւան 1947, էջ 309): Նա աւելի ստէպ՝ զօրավար կը կոչուի (հմմտ. վարը):

Ռշտունի նախարարները իրրեւ տէրեր Ռշտունեաց ընդարձակ գաւառին՝ գործունէութեան եւ շինարարութեան լայն ասպարէզ ունէին: Կը ստիպուէին զայն պաշտպանել ասպատակութիւններու եւ ներխուժումներու դէմ: Փոյթ կը տանէին անոր զարգացումին ու վերելքին (հմմտ. վարը եւ Ալիշան, Այրարատ, էջ 428):


3. ՌՇՏՈՒՆԵԱՅ ԵՐԿԻՐԸ

Ռշտունեաց նախարարութեան երկիրն ու գաւառը կոչուած է «աշխարհ Ռշտունեաց». սակայն Խորենացին տարակոյսի մէջ է թէ գաւառէն նախարարութիւնն իր անունը կը ժառանգէ (հմմտ. վերը): Հ. Ալիշանի համաձայն Ռաշատ անուն անձէ մը գաւառը կ'անու. իր յորջորջումը (հմմտ. վերը): Իսկ Հ. Հիւրջման տոհմի անուն կը համարի (Հին Հայոց տեղւոյ անունները, Վիեննա 1907, էջ 210):

Ռշտունեաց երկիրը անծանօթ չէ — այժմ կը կոչուի Գաւառ — ուստի եւ հակիրճ տեղեկութիւններով պիտի գոհանամ ու անոնք ալ պարզապէս անոր համար՝ թէ ո՞ր երկրի մէջ հասակ նետեցին, գործեցին ու արգիւնաւորուեցան Ռշտունիները՝ 5:

Բցնունեաց ծովի հարաւային եզրերը կը գտնուի Ռշտունեաց գաւառը եւ այս պատճառով ծովը երբեմն նաեւ Ռշտունեաց ծով կոչուած է (Բուդ., էջ 25): Նմանապէս՝ որովհետեւ ծովը նոյն նախարարութեան ենթարկուած էր:

<sup>4</sup> Մանածիւր Ռշտունի եւ Շահապիւսի ժողովի կանոններու մէջ սպարապետ անուանուած է (հմմտ. վարը): Զօրայ ալ սպարապետ է (հմմտ. վարը) ինչպէս եւ Բարգաւիւրան (հմմտ. վերը):  
<sup>5</sup> Ռշտունեաց գաւառին մասին հմմտ. Laurent J. L'Arménie entre Byzance et l'Islam depuis la Conquête Arabe jusqu'en 886, Paris 1919 էջ 89 եւ Հիւրջման Հ. Հին Հայոց տեղւոյ անունները, Վիեննա 1907, էջ 210—212:



Բուզանդ գաւառը կ'անուանէ «Աշխարհ» եւ ենթադրել կու տայ գաւառին մեծութիւնն ու ընդարձակութիւնը: Բայց աննպաստ պարագաներու տակ անոր սահմանները անձկացած են:

Ռշտունեաց երկրի բարձր լեռն է՝ Ընձաքիարս կամ Ընձաքիսար եւ կամ Կապուտկող կամ Կապուտողն: Կը նայի Վանայ ծովին վրայ: Անոր ստորոտը կայ համանուն զիւղը: Դարձեալ աղբիւր մը, զոր կը բղխեցնէ Յակոբ Մծրնացին եւ որուն մօտ յետագային վանք ու եկեղեցի կը կառուցուին՝ նոյն սուրբին անունով (Հմմտ. վարը եւ Բուզանդ, էջ 24, Հ. Ղ. Ինճիճեան Ստորագրութիւն, Հին Հայաստանեայց, Վենետիկ 1835, էջ 165—166):

Ուրիշ բարձր լեռ մըն է՝ Արտոս: Թովմաս Արծրունին անոր մասին սա ուշագրատեղեկութիւնները կ'աւանդէ՝ «Ի հարաւակողմն կուսէ ամրոցին կայ բարձրաբերձ լեռն Արտոս, որ ի գարնանային հասարակութենէն մինչեւ ցաշնանայինն եղանակ՝ ամբարեալ պահէ յինքեան զղալարութիւն արմատոց եւ ծաղկանց եւ զձիւնահոսս ամբարեալ ի պէտս թագաւորաց եւ ամենայնի, որ ցանկացի ոք առնուի: Նաեւ ի գլխոյ լեռինն հոսեալ իջանն զեռք սահանակարկաջք յորդահոսք, որով ոտոզանի երկիրն առհասարակ, որք եւ ի ծովու անկանելով բղխեն ձկունս մանուսս առ ի պէտս վայելչութեան բնակչաց աշխարհին եւ համարեն զինչս բազումս ի գանձս թագաւորաց» (Թ. Արծրունի, Պատմ., Ս. Պետերբուրգ 1887, էջ 291):

Մանակերտի մերձ կայ փոքրիկ լեռ մը կամ բարձունք մը, ուսկէ Մանածիճ Ռշտունին Յակոբ Մծրնացի սարկաւազները ծով գահավիժել կը հրամայէ (Բուզ., Պատմ., էջ 24):

Ռշտունեաց աշխարհը ջուրի կարօտութիւն չէր զգար, զի ունէր իր ամին Բզնունեաց ծովակը եւ քանի մը գետակներ: Իսկ Աղթամար կղզին Ռշտունի եւ Բզնունի նախարարներու փնտած վայրն էր եւ անոնց գուրգուրանքին առարկան: Դարերու ընթացքին ենթարկուած է Անձապ, Բզնունեաց, բայց մանաւանդ Ռշտունեաց ու Արծրունեաց նախարարութիւններու (Ինճիճեան, Ստորագրութիւն Մեծին Հայոց, Վենետիկ 1822, էջ 172, ուր եւ յառաջընթացութիւններ եւ վկայութիւններ ազգային մատենագրութիւններէ):

Ռշտունեաց գաւառի քաղաքներէն ու գիւղերէն յիշենք.

1. Ոստան, որ ծովեզերք կը գտնուի եւ Ռշտունիներու գահանիստն էր (Ն. Աղոնց, Հայոց նախարարութեան ծագումը, Թրգմ. ուսերէնէ Գ. Գիւղարեան, Պէյրութ 1949, էջ 84): Իր ամէնագլխի առաւելութիւններով ուշադրութիւնը կը գրաւէ Վարդ Պատրիկի ու Գաղիկ թագաւորի եւ զանազան շինութիւններով կ'օժտուի ու կ'ընդարձակուի (Թ. Արծ., Պատմ., էջ 255 եւ 290—292):

2. Մահաշատ, որ կը կարծեմ՝ թէ իր անունն առած ըլլայ Մանածիճ Ռշտունիէն (Հմմտ. վերը) եւ զոր Գաղիկ Արծրունին Ոստանի պէս նախանձելի զարգացումի եւ բարգաւաճումի կը հասցնէ (անդ, էջ 255):

3. Մանակերտ, երբեմն գրուած ու գործածուած նաեւ Մանակերտ, սակայն աղաւաղում կը նկատեմ ու անոր մէջ եւս կը տեսնեմ Մանածիճ Ռշտունիի անուան կրճատումը: Այս տեղէն է՝ որ Մանածիճ Ռշտունին Յակոբ Մծրնացիի սարկաւազները դարհոսս ծովամոյն կ'ընէ (Հմմտ. վերը եւ Արծ., էջ 255):

4. Բարաղաշատ, որ փոքրիկ զիւղ մըն է վերնոյն մերձ (Ինճիճեան, անդ, էջ 159):

5. Նորագիւղ, որուն բնակիչները Բուզայէն կարանաւորուելով «ածեն ի տեղի վաճառուն Ոստանին Ռշտունեաց արկեալ տոռունս ի պարանոցս հանին ի սուր» (Արծ., էջ 128):

6. Պարձիս գիւղ, ուր կ'ամփոփուին Թովմաս Առաքեալին նշխարները (Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 170):

7. Ռշտունեաց գիւղերէն են նմանապէս՝ Տշող, Գուկանս, Նարեկ, Գանձակ, Ուրու, Ծատուան եւ ուրիշներ, որոնց կարգին Աղբաթանից, ուսկէ էր Արրահամ կաթողիկոսը:

Նոյն գաւառին մէջ է նաեւ Եղեշէի այլը եւ հոն կը կանդնուին բազմաթիւ սրբավայրեր ու վանքեր, ինչպէս՝ Ս. Թովմասի, Իլու Բառասուն խորանի, Լուսապտուղ Ս. Մահակի, Կապուտկողայ Ս. Յակոբի, Ս. Կարապետի, Ոչխարանից, Նարեկայ, Չաղար Ս. Նշանի, Ս. Վարդանի վանքերը (Հմմտ. Հ. Հ. Ոսկեան, Վասպուրական-Վանի վանքերը, Վիեննա 1940, էջ 141—228): Բայց ամէնէն հոյակապ վանքն է՝ Աղթամարի Ս. Խաչի վանքը (Հմմտ. անդ, էջ 86—133, ուր եւ Հմմտ. Առտէրի վանքը՝ էջ 133):

Ռշտունեաց գաւառը կ'արժանանայ եկեղեցական բարձրաստիճան առաջնորդ ունեւարու: Չայն կը հովուեն ու կը կառավարեն եպիսկոպոսներ, որոնցմէ երկուքը մանաւոր անուն եւ հոչակ ունին: Մին՝ Սահակ եպիսկոպոս՝ Վարդանանց շրջանին եւ միւսը՝ Արրահամ, որ կաթողիկոսութեան գահը կը բարձրանայ:

Թէեւ չէ յիշուած, սակայն այդ լուծթենէն չեմ ուզեր հետեցնել՝ թէ Ռշտունիներու անդրանիկ հայրապետն եղած ըլլայ Ս. Սահակ, որ 449ին Արտաշատի ժողովքին ներկայ կը գտնուի: Սոյն սխեհոգոսին մասնակցող եպիսկոպոսներու ցանկին մէջ՝ մինչ Փարպեցին զինքը հինգերորդ բարձրաստիճանաւոր եկեղեցականը կը նշանակէ (Պատմ., էջ 134), Եղիշէ զինքը տասնութերորդը կը զնէ եւ այն՝ Արծրունիներու Մուշէ եպիսկոպոսէն վերջ (Պատմ., էջ 50), ինչպէս Փարպեցին եւս՝ նոյն հայրապետէն յետոյ անոր անունը կու տայ: Սահակ իր խկապէս առաքելի եւ հօտապետի գործունէութեամբը եւ հաստատուն հաւատքովը ժամանակին մեծազոյն դէմքերէն է: Կը կարանաւորուի, օտար աշխարհներ տարագիր կը քշուի, ամէն տեսակ զրկանքի կը դատապարտուի եւ վերջապէս «Յարուցեալ ինքնին Վեհեշապուհ սուղի գործակցաց իւրոց հարկանէր սուսերաւ զուս սրբոյ եպիսկոպոսին Սահակայ եւ հուպ ի դօտին մերձեցուցանէր զվէրուն եւ սրբոյ եպիսկոպոսին ի սաստիկ հարմանէն դրդուեալ, ոչ գլորեալ անկանէր յերկիր, այլ ի քարի մի յեցեալ հաստատէր...: Եւ սուրբն Սահակ կայր եւս ոգով, զորոյ յետ վախճանելոյն ամենեցուն կարեցին զգլուխն սուսերաւ (Փարպ., էջ 222—223. Եղիշէ, էջ 341—342): Անոր շարակրութեան ու ցախն եւ փառաւոր յաղթանակին կցորդ ու բաժանորդ է «սուրբ սարկաւազն Քաջաջ յՌշտունեաց» (Փարպ., էջ 32 եւս. Եղիշէ, անդ, էջ 342):

Բաւական վերջ Բարգէն կաթողիկոսի օրով (516) կը յիշուի Դանիէլ եպիսկոպոս Ռշտունեաց ի Պարսս գրուած թղթին մէջ (Գիրք Թղթոց, Տփլիս 1901, էջ 42): Իսկ Ներսէս կաթողիկոսի «Մեղադրութեան սո եպիսկոպոսունան» թղթին մէջ կը հանդիպինք Սահակ եպիսկոպոս Ռշտունեացի (անդ, էջ 70): Մինչդեռ «Միարանութեան ուխտի» թղթին մէջ անոր անունը չկայ (անդ, էջ 73): Բայց Յովհաննէս Բ. Գարեղինեցի կաթողիկոսին «Առ եպիսկոպոսունս» Աղուանից

թղթին մէջ կը տեսնենք Ռշտունեաց եպիսկոպոս Գրիստափոր (անդ, էջ 81): «Կարելի է ըսել թերեւս՝ թէ Ռշտունեաց աթոռոյն վրայ բարձրացած ըլլայ Գրիստափորէն ետքը Արրահամ եպիսկոպոս Աղբաթանցին» (Հ. Ն. Ակինեան, Կիւրիոն Կաթողիկոս Վրաց, Վիեննա 1910, էջ 149), որ յետոյ կաթողիկոս կ'ընտրուի (անդ, էջ 149—157):

Ներսէս Շինողի ժամանակ Ռշտունեաց եպիսկոպոս է Սիմէոն, որ Դունոյ ժողովին անդամներէն է (Չամչեան, Պատմ., Բ., էջ 345): Իսկ Վարդ Պատրիկ իր նենգամտութեան համար (Հմմտ. վարը) ապաշխարանք կը ինդրէ Գրիգորիս եպիսկոպոսէն (Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 165): Թովմաս Արծրունիի հաղորդագրութեան համաձայն Գրիգոր եպ. Ռշտունեաց Դունոյ երկրաշարժի տեսն կը տատապի (Պատմ., էջ 231): Յետագային Սենեքերիս Արծրունիի թագաւորութեան միջոցին Ռշտունեաց գաւառին հայրապետներէն են՝ Եղիշէ ու Սահակ (Մ. Ուսայեցի, Պատմ., Երուսաղէմ 1869, էջ 49 եւ Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 165):

Այս եպիսկոպոսները իրենց խօսքովը ու գործովը ազդած են Ռշտունի նախարարներու վրայ եւ Ռշտունին Թէգորոս մեծ ազդեցութիւն ունեցած է այրապետական աթոռին վրայ (Հմմտ. վարը):

Ռշտունեաց գաւառին ու անոր եկեղեցականութեան ստեղծութեամբ՝ հարկ է յիշել անունը՝ Եղիշէ Պատմագրի, որ հոն ապրած ու մեռած է եւ որուն աճիւններն Չաղար Ս. Նշանի վանքը ամփոփուած կ'աւանդուին (Արծ. Պատմ., էջ 81, Սոփիբք, ԺԱ., Պատմութիւն վարուց Ս. Եղիշէի վարդապետի, Վենետիկ 1854, էջ 144. Հ. Հ. Ոսկեան, Վասպուրական-Վանի վանքերը, Ա., էջ 206<sup>6</sup>):

ՌՇՏՈՒՆԵԱՅ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ

Ռշտունիներու նախահայրը կը մնայ անձանօթ:

Հ. Ալիշան Ռաշատ անունով մէկը կը զնէ անոնց անդրանիկ ներկայացուցիչը (Հմմտ. վերը): Թովմաս Արծրունիին մօտ կը գտնենք Ռաշամ Ռշտունի, որ Ռաշատի հետ կրնայ նոյնանալ. «Միայն զմերս գրաւեաց զմիտս եւ զտեսութիւն հրաշակերանս եւ

<sup>6</sup> Եղիշէի մասին ընդարձակ ու մանրամասն Ուսայեցիի «Պատմութիւն ունի Հ. Ն. Ակինեան «Եղիշէ վարդապետ եւ իւր պատմութիւնն Հայոց պատերազմի Ա. եւ Բ. մաս, Վիեննա 1932 եւ 1936:

քան զբազումս նորանշանն եւ զարմանալին Աղթամար, որ թէպէտ եւ յառաջ քան զայսոսիկ ի Դաւթայ Սախաունոյ եւ յԻսապայ Ռշտունոյ եւ ի Բաղափրանայ առի առեալ շինութիւն» (Պատմ., էջ 293. հմմտ. Հաւաք. 6): Կեղծիքի արդիւնք է այս (Հ. Աճառեան, Հայոց անձնանունների Բառարան, Բ., Երեւան 1944, էջ 23):

Մովսէս Խորենացին Ռշտունեաց տոհմէն իբրեւ առաջին քաջարի իշխան ու զօրավար դիտէ Բարգափրան (Պատմ., էջ 201. հմմտ. Յովհաննէս Պատմադիր, Պատմ., Հայոց, Թիֆլիս 1912, էջ 80):

Սորենացին կը գրէ՝ «Յայնմ ժամանակի առեալ Տիգրանայ (Մեծի) զԲարգափրան նահապետ Ռշտունեաց նախարարութեան սպարապետ կացուցանէ Հայոց եւ Պարսից զօրաց եւ առաքէ ի վերայ զօրաց Հոտայեցոց հրաման առեալ զրնակիւս աշխարհին Ասորոց եւ Պարստիկացոց ի հաշտութիւն հաւանութեան խօսել» (Պատմ., էջ 202): Անոր կը ներկայանայ Անտիոգոնոսի խնամին Պակարոս, որ զինքը կը յորդորէ «Քնկենլով ի թագաւորութեանէն Հրէից զՀիւրկանոս եւ թագաւորեցուցանել զԱնտիոգոնոս եւ փոխարէն ստանալ հինգ հարիւր զեղեցիկ կին եւ հարգար քանքար»: Հայ սպարապետը ինքզինքը համարիտ կը ցուցնէ, սակայն Հիւրկանոս զինքը կանխելով՝ խաղաղութեան մասին կը խորհրդակցի: Այն առեւ Բարգափրան Գնէլ Գնուսի տակառապետը Երուսաղէմ կ'առաքէ իբրեւ թէ «ի պատճառս խաղաղութեան, բայց ի զազանիս օգնել Անտիոգոնոսայ»: Գնէլ Հիւրկանոսը կը համոզէ Բարգափրանին առջեւ ելլել եւ նա վերջինէն երգում ընդունելէ յետոյ Փասայէի հետ «Գայ առ Բարգափրան ի ծովկերն ի գեօղն, որ կոչի Եքտիպոն»: Հայ զօրագլուխը նախ կը պատուէ ու կը մեծարէ հրեայ քահանայապետը եւ ապա այնպէս մը կ'ընէ որ անիկա իյնայ ձեռքը Անտիոգոնոսի, որ անոր «Չականջն ատամարք ի բայ կտրէր, զի թէ այլ ժամանակ փոխեցի (սրբաբերլ՝ փախիցի), անհնար լիցի նմա զքահանայութիւնն ունել, քանզի օրէնքն զողջանդամսն հրամայեն կացուցանել քահանայս»: Քաղաքական գանազան անցքերէ վերջ «ՉՀիւրկանոս կապեալ ածեն Տիգրանայ հանդերձ գերութեամբն եւ Տիգրան հրաման տայ Բարգափրանայ նստուցանել զգերին Հրէից, որ ի Մարիսացոց ի քաղաքն Շամիրամայ» (Սոր., Պատմ. էջ 203—206, 212—

213, Ասողիկ, Պատմ., էջ 40 եւ քիչ մը տարբեր՝ Յովհաննէս Կաթ. Պատմ., էջ 30):

Հիւրկանոսի կալանաւորումն ու ազատագրումն եւ ապա անոր դժբախտ մահը՝ Յովսէպոս հաւատարմէն այսպէս կը պատմէ՝ «Տեսանք թէ ինչպէս Պարթեւներու զօրքերու զօրավարները Բարգափրանէն եւ Բակուր, կալանաւորեցին Հիւրկանոս քահանայապետը եւ Հերովդէսի Փասայէլ եղբայրը, որ գերութեան ամօթին չտոկարով՝ ինքզինքը սպաննեց: Արդ կը մնայ մեզի հազորդել՝ թէ ինչպէս Հիւրկանոս ազատեցաւ եւ եկաւ գտնելու Հերովդէսը, երբ առիկա թագաւոր եղաւ: Հիւրկանոս Պարթեւներու Հրահատ Գ. թագաւորին տարուելով՝ իր ազնուական տոհմին համար մեծապէս պատուեցաւ եւ կապանքներէն արձակուեցաւ ու հրաման ստացաւ ընակելու Բարեթոն, ուր բարձրաթիւ Հրեայներ կը գտնուին: Ոչ թէ միայն այս մեծ քաղաքին մէջ ընակողները զինքը կը յարգէին իբրեւ քահանայապետ ու իրենց թագաւորը, այլ եւ բոլոր Հրեայները, որոնք Եփրատի միւս կողմը կը նստէին՝ նոյն մեծարանքը իրեն կը մատուցանէին: Նա՛ երբ իմացաւ Հերովդէսին թագաւորելը՝ ցանկացաւ իր հայրենիքը դառնալ եւ Հրահատէն արտօնութիւն ստացաւ, թէ եւ բարեկամներէն շատերը անոր խորհուրդ տուին հոն կենալու: Նմանապէս երբ Հերովդէս տեղեակ եղաւ Հիւրկանոսի արամագրութեան՝ Հրահատին Սարամաղղա անուն անձ մը առաքեց շատ ընծաներով՝ մինչեւ որ Հրահատ հաւանելով զինքը թողուց. եւ Բարեթոնի մէջ ընակող Հրեայները անոր ճանապարհածախսը հայթայթեցին: Հերովդէս առ երեսս զինքը շատ մեծարեց եւ մինչեւ անգամ անոր տուաւ ժողովներու նախաթոնն ու բարձր, եւ այնպէս կարգադրեց այն ամէն բան ինչ որ պէտք էր, որպէս զի չիմանար՝ թէ զազանի դաւ մը կը նիւթուէր իր գէմ...: Անտոնիոսի Ակտիոնի քով պարտուելէն յետոյ՝ Հերովդէս Օղոստոսէն կասկածելով՝ թէ զուցէ զինքը իշխանութեան զրկէր՝ ի վրէժ այն բարեկամութեան, զոր ունէր անոր թշնամիին Անտոնիոսի հետ, հրամայեց սպաննել ու թառեանալ ներու Մաղքաս կուսակալին հետ գաղտնի յարարութեան մէջ ըլլար ու ծածուկէն ուզէր իրեն դաւել: Այսպէս՝ կը վերջացնէր Հիւրկանոս իր կեանքը, որ այնքան առցուն եղաւ տառապանքներով» (Յովս., Նախն.

Պատմ., ԺԵ., 9. հմմտ. Մ. Ա. Գարագաշեան, Բնական Պատմ. Հայոց, Թիֆլիս 1895, Բ., էջ 176):

Գարագաշեան (անդ, էջ 177) նկատի ունենալով Յովսէպոսի հազորդածները շատ տեղին կը գրէ՝

«Զորոյ վաւերականութենէն դժուար է կարծենք տարակուսել, մանաւանդ ի շնորհս Սորենացոց»: Իսկ Աճառեան կը շեշտէ՝ «Այս Սորենացին կամայական կերպով վերածել է հայկականի» (Հայոց անձնանունների Բառարան, Բ., էջ 387): Այսպէս՝ Բարգափրանէն պարթեւ զօրավարը՝ հայ Բարգափրան Ռշտունի սպարապետ ըրած է ու անոր վերադարձ է վերոյիշեալներն: Իսկ Հրեայներու գերութեան եւ ուրիշ պարագաներու՝ նա ծանօթ է Փ. Բուզանդէն եւ այդ հիմքի վրայ կառուցած է իր շէնքը (հմմտ. էջ 177—178):

Ազաթանդեղոսէն կ'իմանանք՝ թէ Տրդատ Մեծ Գրիգոր Լուսաւորչին զէպի Կեսարիա ուղեկից ու շքադիր կ'առաքէ նմանապէս «Ճններորդ՝ իշխանն Ռշտունեաց աշխարհին... զի տարեալ Գրիգորն քահանայապետ կացուցեն իւրեանց աշխարհին» (Պատմ., էջ 597—598), սակայն նախարարին անունը կը լռէ: Նա արդէն ուղեկից աստիճանաւորներու տոհմերու յիշատակութեամբ կը դոհանայ:

Իսկ Բուզանդէն յականէ յանուանէ յիշատակուած առաջին Ռշտունի նախարարն է Մեհուդակ կամ Մեհեմդակ: Նա հաւանօրէն անդրանիկ եղբայրն ըլլայ Գարեգինի, որուն մասին քիչ մը վերջ: Մեհուդակ քաջարի իրակակիցն է Վաչէ Մամիկոնեանի ու յաղթական զօրավարը՝ Գարեգին Ռշտունիի, Վահան Ամատունիի եւ Վարազ Կամենականի հետ: Անոնք՝ «Անվահեր հասանէին, հարկանէին, սատակէին զօրսն Ալանացն եւ Մաղքեացն եւ Հոնացն եւ զայլոց ազգացն եւ ինուին զղաշտն առապարացն զիակամբ մեռելոց, մինչ զի իբրեւ զգետ յարուցեալ երթայր արիւնն անհնարին... եւ զգլուխն Սանեսանայ մեծի թագաւորին եկին բերին առ Վի արքային Հայոց» (Բուզ., Պատմ., էջ 17):

Սորով թագաւորին հրամանովը եւ աւագ նախարարներու համամտութեամբը՝ Վաչէ Մամիկոնեան անոնց հետ միացած՝

Բղնունեաց անհաւատարիմ ու դաւաճան իշխանին — Դատարէնի — վրայ կը յարձակի ու անոր սերունդը բնաջնջելու կը ձգտի: Բուզանդ առանձնապէս կը շեշտէ՝ թէ անոր տոհմը — կին ու որդիներ — Ռշտունիներու իշխանին (ոչ՝ իշխաններու) Աղթամար կողուած կղզիին ամրոցին մէջ կը գտնուէին եւ Վաչէ Մամիկոնեան նա մտնելով՝ իրական սեռին անգամ չուզէր խնայել՝ «Անցեալ ի կղզին առհասարակ ոչ գէգ թողոյր եւ ոչ գարու» (Պատմ., էջ 18):

Կարելի է Վաչէի հետեւող աւագ նախարարներու շարքին մէջ նկատել նաեւ Մեհուդակի անունը եւ այնպէս մեկնել Վաչէի անփափկանկատ ու անվախ անցքը՝ Աղթամար եւ հոն ըրած կոտորածը: Իսկ իրական սեռին ու Դատարէնի զաւակներու ապաստանումը Աղթամար՝ բնական հետեւանքն էր մերձաւոր վայր մը ապաստանելու՝ ասպատակաւորներու եւ պատուհասողներու ձեռքէն զերձանելու համար: Անոնք այդ միջոցին գուցէ դիմած էին՝ այդ կերպով՝ Ռշտունիներու շնորհքը աղբսելու եւ գթութեան արժանանալու համար: Եւ կամ թերեւս անոնց մէջ նոյն իսկ ազգականութեան կապ մը կար: Մինչ Բուզանդ Դատարին կամ Դատարէն Բղնունեաց նահապետ կը ներկայացնէ՝ Աղոնց անոր անունը Ռշտունիներու նախարարներու շարքին մէջ կ'օղակէ (հմմտ. Հայոց նախարարութեան ծագումը, էջ 88), որ կարծեմ լոկ շիթութեան հետեւանք ըլլայ:

Մեհուդակ շքադիր-ուղեկից է Վասակ Մամիկոնեանի, Անդովիկ Սիւնիի, եւ Արշաւիր Կամսարականի հետ՝ Տարօնցի Փառէնի՝ Կեսարիա կաթողիկոսական ձեռնադրութեան երթին (Բուզ., էջ 44—45):

Ամենեւին դժուարութիւն չեմ գտներ Մեհուդակի կամ Մեհուդակի հետ նոյնացնելու Մեհեմ Ռշտունին: Սա՛ մին է այն նախարարներէն, որոնք կ'առաքուին Ներսէս կաթողիկոսապետին հետ առ կայսրն Յունաց Վաղէս... «Ի սէր միւրանութեան» (Բուզ., էջ 106. Զ. Սոփ., էջ 52): Ժամանակը կը յարմարի եւ Մեհուդակ արդէն ստէպ ուրիշ առիթներու մէջ առաքելութեան կը յղուի, ինչպէս նաեւ կանխաւ ներսէսի հետ Կեսարիա, որպէս զի հայրապետական ձեռնադրութիւն առնու (Բուզ., էջ 72 եւ Սոփեբք, Զ., էջ 30): Անունի մէկ վանկի կրճատումը կրնայ զբնագրի վրիպակ ըլլալ եւ կամ անոր փառաբան կոչումը յիշեցնել:

Մեհենդակ կ'ունենայ Տախտ անունով որդի մը, որ Ռշտունիներու կոտորածէն կ'ազատի, ինչպէս քիչ վերջ պիտի նկատենք: Մինչ Բուզանդ ազատուած Ռշտունին կ'անունէ Տաճատ (Պատմ., էջ 47), Թովմաս Արծրունին կը կոչէ Մեհենդակ «Յախտակեցին (Մամիկոնեանները) զՇաւասայ որդի Վաչէի Արծրունեոյ եւ զՄեհենդակ Ռշտունի, քանզի էին մանկունք տրովք. առին զնացին յամուրան Տաչոց եւ ի չափ հասեալ ի տրոց տղայականաց՝ ետուն զգասերս իւրեանց կնութեան մանկանց եւ ի նոցանէ անցեալ ազգ երկոցունց Արծրունեաց եւ Ռշտունեաց» (Պատմ., էջ 59—60): Թովմաս Արծրունին այս սխալին մէջ կը դահապիտի Սորենացիին սա խօսքէն «Բայց զմանուկն մի, որդի Մեհենդակայ եղբոր նորա (Չորայի) փախուցեալ զայեկացն ապրեցուցին» (Պատմ., էջ 427):

Հաւանորէն Մեհենդակ Ռշտունին եզրայնը ըլլայ՝ ԳԱՐԵԳԻՆ, որ անոր համակարծիք ու համամիտ է եւ նաեւ՝ նիզակակից Վաչէ Մամիկոնեանի ու մասնակից Օշական բերդի կողմերը Մազբութներու դէմ մղուած ու շահուած պատերազմին (Հմմտ. վերը եւ Բուզ., էջ 17): Տէր է Ռշտունեաց (անդ, էջ 183): Աճառեան կը նկատէ զինքը «փեսայ Ռշտունեաց» եւ է՝ իսկ (Հայոց անձնանունների Բառարան, Ա., էջ 144): Նա կ'ամուսնանայ Վարդան ու Համազասպեան Մամիկոնեաններու Համազասպունէի քրոջ հետ, որ քոչրաթիւ էր (հաւանականաբար՝ խորթ քոյր, Հմմտ. Մ. Արեղեան, Աշխարհաբար թարգմանութիւն Փ. Բուզանդի Պատմութեան, Երեւան 1947, էջ 334), Վահան Մամիկոնեանի) «Այս Գարեգին փեսայ լեալ էր յառաջ նորին Համազասպէի, զքոյր նորին Համազասպունէի ունէր կին» (Բուզ., էջ 249. Հմմտ. էջ 183): Երբ Գարսիկներու Շապուհ թագաւորը Հայաստան կ'արշաւէ Գարեգին իր կինը կը թողու եւ կը փախչի (անդ, էջ 183): Ազգային պատմութեան եւ մասնաւորապէս Բուզանդեան Պատմութեան յուզիչ ու զբաւիչ էջերէն է Համազասպունէի նահատակութեան դրուագը եւ կ'արժէ գայն անգամ մը եւս ընթեռնուլ, սակայն աշխարհաբարի վերածելով. «Այնուհետեւ Վահան Մամիկոնեան ու Մերուտան Արծրունի, այս երկու պիղծ, անօրէն եւ դժնեայ մարդիկ, որոնք աստուածապաշտութեան ու խաչն հրաժարած

էին եւ ուրացութեամբ յանձն առած էին ու կը պաշտէին Մազբութեան անօրէն կրօնը, սկսան Հայոց աշխարհի մէջ, բոլոր գաւառներու մէջ, ամէնուրեք քրիստոնեաներու ազօթալայրերը ու եկեղեցիները աւերել ու քանդել: Եւ շատ մարդիկ, որոնք իրենց ձեռքը կ'իջնային՝ կը ստիպէին աստուածպաշտութիւնը թողուլ ու Մազբութեան կրօնը ընդունել: Ապա Վահան եւ Մերուտան կը հրամայէին բերդերուն այն կիները՝ որոնց ամուսինները՝ նախարարները, զիրենք թողուցած ու փախած էին, ստիպել՝ որ Մազբութեան կրօնին դառնան եւ չհամաձայնելու պարագային՝ բոլորն ալ չարաչար մահով մեռցնել: Բերդապահները այս հրամանը ստանալով՝ իւրաքանչիւրը իր մօտ գըտնուածը՝ կը նեղէր ու կը ստիպէր հրամայածին համաձայն...: Իսկ Վահան (խորթ) քոյր մ'ունէր, Մամիկոնեան տոհմէ, քոյրը Վարդանին, Համազասպունէի եւ անիկա Ռշտունեաց գաւառին տիրոջ Գարեգինին կիներ էր: Անոր ամուսինը Գարեգինը՝ Պարսիկներու թագաւորին Հայաստան եկած ժամանակ՝ փախած էր<sup>7</sup>: Իսկ ինքը Ռշտունիներու տիկինը Տոսր գաւառին Վան քաղաքին միջնաբերդին մէջ կը մնար: Անօրէն Վահան ու Մերուտան հրաման կու տային բերդապահին՝ տիկինը նեղել, եթէ յանձնառու չըլլար Մազբութեան կրօնին ու զինքը բարձր աշտարակէ կախել ու մեռցնել: Երբ Համազասպունէին չընդունեցաւ Մազբութեան կրօնը, զինքը հանեցին բարձր աշտարակին վրայ, որ կը դանուէր ժայռին բարձր գագաթին վրայ, ետեւի կողմէն ծովակին դարձած: Չինքը մերկացուցին՝ ինչպէս մօրմէն ծնած էր ու ոտքերուն կապ անցնելով՝ բարձր կողմէն (զինքը) կախեցին ու այսպէս՝ կախազանի վրայ մեռաւ» (Պատմ., էջ 183 ու 249—250): Քաջ վկայունէի մարմինը երկարատեւ կախուած կը մնայ եւ ժամանակի ընթացքին կը նեխի ու կը քայքայուի: Անոր ոսկրները գայեակը կը հաւաքէ — օրերով սպասելով անոնց թափուելուն — եւ կը տանի քաղաքականներուն մօտ, որոնք անոնց վրայ արցունք ու ծաղիկ ցանելով՝ զանոնք եկեղեցւոյ մը մէջ կ'ամփոփեն. ու յետագային Չորոյ վանքին մէջ կը դրուին (Թ. Արծ., էջ 63):

Տարիներ վերջ Վարազդատեան-Մանուէլեան (Մամիկոնեան) վրիժամարտի զաշտին

<sup>7</sup> Թ. Արծրունիին համաձայն «Անձնագրով զնաց փախաւայ առ կայսրն Յունաց» (Պատմ., էջ 63):

վրայ՝ Համազասպ Մամիկոնեան<sup>8</sup> զիակներու եւ վերաւորներու մէջ կը հանդիպէ իր փեսային՝ Գարեգինին, «որ ողջ կայր, զի ոչ խոց էր եւ ոչ վրասեալ ինչ» (Բուզանդ, էջ 249): Եւ որ՝ իրմէ նժոյգ կը խնդրէ հեծնելու համար: Սակայն ինչո՞ւ զիակներու մէջ. որքան կ'երեւայ պահուրտելու համար ու տեսնելով զՀամազասպ՝ ինքզինքը կը յայտնէ անոր: Նա՝ Վարազդատեան բանակին մէջ է, ուստի եւ թագաւորին կողմնակից: Համազասպ կը հրամայէ վահանաւորներուն զինքը վահաններու տակ պահել ու թաղցնել. դուցէ յետոյ անոր դատը տեսնելու դիտաւորութեամբ: Սակայն սպասակիրներու դամապետը «եհար զթուրն մատուցեալ ի նա, պատառ պատառ կոտորեալ անդէն՝ ցրեալ սատակեաց զնա»: Կը խորհով՝ որպէս զի ետքէն Համազասպ իրբեւ իր փեսային հանդէպ — Համազասպունէին սիրոյն համար — բարեացակամ չգտնուէր (անդ, էջ 249—250):

Մովսէս Խորենացիին անձանօթ է Գարեգին Ռշտունին: Իսկ թէ ինչ անհնչութեամբ Մեհենդակի անունը կը յիշէ՝ նկատի առինք: Նա Բարգաւիրանէն յետոյ Ռշտունիներու տոհմէն կը ներկայացնէ Մանախիթ կամ Մանախիթ<sup>9</sup>, որ «այր չար եւ անգամ է», ինչպէս Բուզանդ կ'աւանդէ, սակայն գոռ պատերազմող է ու քաջ: Տրդատ Մեծ Գարսիկներու վրայ ասպատակած տեսն՝ իր բանակներու առաջնորդութիւնը կը վստահի չորս զօրավարի, որոնցմէ մին է՝ Մանախիթը (Պատմ., էջ 357. Հմմտ. եւ Ստ. Ասողիկ, էջ 68): Նոյն պաշտօնը Ռշտունի նախարարը յառաջ կը վարէ անոր յաջորդին — Խորենացի — թագաւորութեան միջոցին: Կիլիկիցի զօրքերով կը շուէ Ասորեստանի եւ իլիկիցի զօրքերով կը շուէ Ասորեստանի Միջագետքի կողմերը: Այդ տեղերը Բակուր Ռեշիսին հետ պատերազմի բռնուելով՝ անոր կը յաղթէ: Իսկ անոր որդին — Հեշայ — կը յաղթէ՝ «երկաթի կապանօք» կ'առաքէ Խորենացիին՝ «երկաթի կապանօք» կ'առաքէ Խորենացիին ու երկրին զբաւումն ու զերկումը կը շարունակէ: Ապա Յակոբ Մծրնացի հայրա-

<sup>8</sup> Մ. Արեղեան կը սրբադէ՛ Համազասպեան Մամիկոնեան աներորդի Գարեգին Ռշտունիի (Աշխարհաբար թարգմանութիւն Փ. Բուզանդի Պատմութեան, Երեւան 1947, էջ 280 եւ 340):  
<sup>9</sup> Մանախիթ անունը գրուած է նաեւ՝ Մանահէր (Բուզ., էջ 25), Մանախից, Շապուհ Բարգաւտունի, Պատմութիւն Հայոց (Եջմիածին 1921, էջ 29), Մանախ (անդ, էջ 37):

պետին ութը սարկաւազները<sup>10</sup> կարանաւորած՝ խուսն բազմութեամբ ու աւարով Հայաստան կը վերադառնայ: Հայրապետը զերկներուն ազատութիւնը կ'ակնկալէ ու կը խնդրէ: Սակայն Մանախիթը կը մերժէ ու դատաւականներու սաղրանքով ութը սարկաւազները դարահոս ծովամոյն ընել կը հրամայէ: Ասոր վրայ հեղահամբոյր եպիսկոպոսին բերնէն այս անգամ անէճքը լսելի կ'ըլլայ ու այն նետի պէս ծանրապէս կը հարուածէ<sup>11</sup> (Խոր., Պատմ., էջ 357, 407, Ասողիկ, Պատմ., էջ 68, 66, 67):

Բուզանդի համաձայն Մանախիթը անգթութիւններով սարսափ կ'ազդէ ու Յակոբ Մծրնացիին անոր կը ներկայանայ: Կը յորդորէ զինքը ժողովուրդին հետ մեղմարար պարելու եւ անասնաբարոյ ու դազանային կատաղութենէն հեռանալու: Սակայն անիկա բացարձակապէս կ'ընդդրմանայ եւ «Իրբեւ քայարձակապէս կ'ընդդրմանայ եւ «Իրբեւ նմա հեծուկս առնելոյ» ութը հարիւր հոգի — առանց որեւէ յանցանքի պարտապան — ծովը թափել կը հրամայէ: Նմանապէս հրաման կ'արձակէ զինքն ալ երկրէն հալածելու եւ հանելու: Հայրապետը սուքին փոշին թափ կու տայ եւ կը հասնի երկաթահատներու եւ կապարահատներու լեռը: Այդ Ընծաքիտարն է, որուն կատարէն ամբողջ գաւառը կը տեսնէ ու կ'անձէ՝ «Ձի մի պակասեցի անտի խոռվութիւն մինչև ի սպառ»: Անէճքին զժրխառ հետեւանքովը Մանախիթին կիներն ու եօթը զուակները կը մեռնին: Յետոյ կ'ընքն չարամահ ծաղկոտեալ ելանէր մեծաւ տանջանօք յաշխարհէ եւ ըստ բանին որ ասացաւ ոչ եղև խաղաղութիւն յաշխարհին յայնմիկ յօրէն յայնմանէ եւ յայա» (Բուզ., էջ 24—26):

Փառտոտին եւ Խորենացիին պատմածներուն մէջ բաւական մեծ տարբերութիւն կայ: Խորենացին, ինչպէս նկատուեցաւ, Մանախիթը «զօրավար հարսուային կողման» կը նշանակէ, մինչ Փառտոտ զինքը կը կոչէ «մեծ իշխան, աշխարհատէր, մեծ ծառայ արքային Հայոց» (Հմմտ. Դադլաչեան, Փ. Բիւզանդացի եւ իւր պատմութեան խարդախողը, վիեննա 1898, էջ 39): Խորենացին Բակուրին

<sup>10</sup> Յակոբ Մծրնացւոյ վարքին մէջ կայ «Մանախիթը Ռշտունի աւարի առ զվեճակ սրբոյն եւ զնէր զերկոտասան սարկաւազունն ի բերդին Մանախիթու կու չեցեալ» (Սոփերք, Ին., էջ 55):  
<sup>11</sup> «Եթէ անէճ» (Յակոբ) արձանացաւ» (Նարեկացի Գր. Ներքոյ Յակոբ Մծրնացւոյ, տես Մատենադրութիւնը Գ. Նարեկացւոյ, Վենետիկ 1840, էջ 445):

դէմ պատերազմող միայն Մանածիւր կը ճանչնայ, մինչդեռ Փաւստոս քանի մը զօրավարի անուններ կը շարէ (Բուզ., էջ 21): Խորենացիին համաձայն Բակուրին որդին Ռշտունի զօրավարէն ձերբակալուած Խոսրովի կ'առաքուի, մինչ Բուզանդի համեմատ նա — Խեչայ կամ Հեչայ — Վաչէի մօտ կ'ապաստանի եւ ապա հօրենական հողերը կը ժառանգէ (Հմմտ. վերը):

Խորենացիին Բուզանդի ութը հարիւր դերուածներու փոխարէն ութը ջրամոյն սարկաւազներ կը ներկայացնէ:

Խորենացիին ընդարձակօրէն կը պատմէ Մանածիւրի մահն ու Յակ. Մծրնացիին աւնէճքին հետեւանքները (էջ 410—411) մինչ Փաւստոս հակիրճ տողերով կը գոհանայ (էջ 25):

Մանածիւր Ռշտունիին մահէն յետոյ «Սպարապետ էր Հայոց հարաւային գնդին Չօրայ» (Խոր., էջ 424), որ Մեհենդակի եղբայրն է (անդ, էջ 427) ու հաւանօրէն Մանածիւրի որդին, քանի որ անոր պաշտօնը կը ժառանգէ: Գուցէ կարելի ըլլայ նմանապէս խորհիլ՝ թէ Չօրայ, Մեհենդակ, Գարեգին ու Մանածիւր իրարու եղբայրներ եղած ըլլան: Սակայն առաջին վարկածին համար Բուզանդի խօսքը քիչ մը հակառակը կու գայ փաստելու — բայց կարելի է դայն դիւրաւ տառացի անուշ — թէ Մանածիւրի կինը իր եօթը զաւակներով մեռաւ (Բուզ., էջ 25): — Նաեւ այժմէն պէտք եմ ուշադիր ընել՝ որ Մովսէս Խորենացիին է միայն որ Չօրայի անուն<sup>12</sup> ու դործը մեզի կ'աւանդէ (Պատմ., էջ 424):

Արդ՝ նա կը հաղորդէ. Հայաստանի լուսատու աստղերէն մին եւս կը խաւարի — Յուսիկ հայրապետը դանաճար կը մեռնի<sup>13</sup>

<sup>12</sup> Հր. Աճառեան (Հայոց անձնանուններու Բառարան, Բ., էջ 220) Չօրայ (զբուած նաեւ Չօրայ) զօրավարը՝ Մանածիւրի որդի կը նշանակէ:  
<sup>13</sup> Բուզանդի համաձայն (էջ 29—32) Տիրան թագաւորը Յուսիկ հայրապետը սպաննել կը հրամայէ, որովհետեւ զինքը կը յանդիմանէ եւ թոյլ չի տար եկեղեցի մտնելու (կը միջնէ Ս. Ամբրոսիոսի ու թէոփոս Մեծի դէպքը), մինչ Խորենացիին կը հաղորդէ՝ թէ Յուսիկ չի թոյլատրեր Յուսիանոս Ռբայոզիին զիսկը նկէզպակիքն» եկեղեցոյ մէջ եւ այս պատճառով՝ կը սպաննուի (էջ 423): Հ. Յ. Գաթրճեան շատ լատ մտադիր կ'ընէ՝ «Այլ եթէ ընթացից ժամանակացն միտ զնեցեմք չմարթի ունել Տիրան գործ ընդ Յուզիանու եւ յայն սակո դէպքն որ կից ընդ նմին են՝ կամ ի յաջորդ անոր Տիրանայ հային եւ կամ յայոց ինն պատճառաց ունին զճաղուսն» (Տիեզերական Պատմութիւն, Բ., Վիեննա 1892, էջ 488. Հմմտ. եւ Գաղղաշեան, Փ. Բիւզանդացիին եւ իւր խաղախոյը, Վիեննա 1898, էջ 9—59):

(անդ, էջ 423): Հայ աւարանին ու նախարարները ասոր վրայ կը դառնան: Այս երկու տխուր լուրերը կը հասնին Չօրայի ահանջը: Նա Տիրան թագաւորէն հրաման ստացած էր Յուզիանոս Ռբայոզիին օժանդակելու եւ պատերազմը Պարսիկներու դէմ արդէն հրատարակուած էր: Չօրայ այս իրադարձութիւններու տեղեկանալէն յետոյ՝ իր զինուորները կը յորդորէ հայ թագաւորին դէմ ըմբոստանալ: Անոնք պատրաստ ու համախա կը ցուցնեն հետեւելու եւ նա Տմորիք գալով՝ հոն սպասողական վիճակի մէջ կը մնայ — ուշադիր՝ միւս նախարարներուն լիք դիրքին: Յուզիանոս անոր արարքին իրազեկ, խնդիրը արագօրէն կը հասցնէ հայկական արքունիքը եւ հաս՝ Տիրան կատարով Չօրայի վրայ կը յղէ Հայր Մարգարէտը, որ զինքը երդումով իր մօտը կը հրաւիրէ: «Իսկ զօրաց նորա տեսեալ թէ լուեալ կան ամենայն նախարարն... ցրուեցան ի տունս իւրաքանչիւր: Եւ միայնացեալ Չօրայ դայ ատ արքայ յոչ կամաց եւ արքայ զՉօրայ ի բունն հարեալ ունի եւ դամուրն նոցին զԱլթամար. եւ բառնայ դամենեսին սատակմամբ: Բայց զմանուկ մի որդի Մեհենդակայ եղբոր նորա փախուցեալ դայեկացն սպրեցուցին: Իսկ արքայ փոխանակ նորա կարգէ զՄարգարէտ տէր Անձտայ» (Խոր., Պատմ., էջ 426—427. Հմմտ. Սաղամուտի մասին Բուզ., էջ 164): — Դաղպաշեան կտրուկ կ'արտայայտուի՝ «Չօրայի ապստամբութիւնը սուրբ Յուսիկան մահուան պատճառով եւս սուտ եւ հնարովի է» (Փ. Բիւզանդացի եւ իր խաղախոյը, էջ 58):

Ռշտունիներու կոտորածի պատմութիւնը Բուզանդ եւս կ'աւանդէ: Հայոց պատմութեան տխուր էջերէն են նախարարական ու ազնուագարմ սերունդներու ջնջումներն ու քայքայումները: Մէկ տան առաւելութիւնն ու փառքը՝ միւս տան նախանձը կը յուզէր: Մէկ տոհմին քաջարի զաւակներ ունենալը՝ թագաւորական եւ իշխանական ուրիշ զարմին ահ կ'ազդէր: Մէկ գերզատանի շատ ու բարեբեր կայուածներու սեպհականութիւնը՝ միւսին անհաճոյ էր: Հետեւաբար պէ՛տք էր տկարացում ու կործանում: Տրդատ Մեծին յաջորդներուն քաղաքականութիւնը այս էր՝ գլխաւոր միջոցը այս էր: Փոխանակ իրենք զօրաւոր ըլլալու, որ կարենային ուրիշին վրայ իշխել, իրենք ակար էին եւ վատ սիրտը անպատիւ միջոցէ չի խորշիւր: Նմանապէս

նախարարներու իրարու հանդէպ նախանձն ու քուլթիւնը ազնուական զարմերու մէջ երկպառակութեան ծնունդ տուած են ու զանոնք բնաջնջելու առաջնողած: Ահա այսպիսի տխուր դրուագ մը Ռշտունիներու նախարարութեան:

Յակոբ Մծրնացի հայրապետին անէճքը Ռշտունիներու վրայ կարծես կապարանման կը ծանրանայ եւ խաղաղութիւնը անկէ կ'արտաքսուի: Հայր Մարգարէտը «այր ներքինի եւ չարասիրտ, չարագործ եւ չարախորհուրդ... Եւ քուլթեամբ կոտորել առանց վնասու... բառնային ի միջոյ առանց ամենայն վնասու եւ յանցման» (Բուզ., էջ 47) Ռշտունիներու եւ Արծրունիներու տոհմերը: Իրական սեռին անգամ խնայողութիւն չըլլար: Բուզանդ կը գրէ՝ «Տայր իւրով չարախօսութեամբ հանել ընդ սուր եւ անունդ առնել» (էջ 47) վերջին բառը պէտք է սրբազրել՝ անսերունդ առնել ու կամ գուցէ՝ անանուն առնել:

Երկու երեխաներ եւ այն՝ նոյն իսկ դեռ ծծիկը՝ Տախատ Ռշտունի (որդի Մեհենդակի<sup>14</sup>) եւ Շաւասպ Արծրունի (որդի Վաչէի) երկնց դայեակներու մօտ գտնուելով՝ սուրբին բերանը չեն իյնար բարեբաստօրէն: Սակայն անոնք եւս կը բռնուին եւ Տիրան թագաւորին առջեւ կը հանուին: Եւ նա կը հրամայէ այդ անմեղ մանուկներու գլուխները իրաններէն բաժնել: Սակայն ահա Մամիկոնեան ազատարար նախարարներ — Արտաւազդ ու Վասակ — զանոնք իրենց անութներու տակ առած՝ կը փախցնեն: Չանոնք մեծցնելով ու զարգացնելով՝ անոնց կու տան իրենց աղջիկները ու այսպէս՝ անոնց սերունդին շարունակութեան կը նպաստեն — ամէն հնարաւոր ու ազդու միջոցներով: — Կոտորածը տեղի կ'ունենայ Տիրանի թագաւորութեան վերջին շրջաններուն, գուցէ 345էն յետոյ:

Բուզանդ եւ Խորենացի իրարմէ կը բաժնուին ու կը հեռանան Ռշտունիներու կոտորածի պատճառին մէջ: Առաջինը՝ քուլթիւնը եւ երկրորդը՝ անհաստատութիւնը պատճառ կը հաղորդէ: Իսկ երկուքն ալ կու դանկը միարանին՝ թէ տոհմը բոլորովին կ'անհիտուի եւ կը մնայ միայն մէկը — Տաճատ: Բայց այնպէս եւս կարելի է գուցէ եզրակաց-

<sup>14</sup> Թովմատ Արծրունիին կը գրէ «Յափշտակեցին... զՄեհենդակ Ռշտունի... ասին զնացին յամուրսն Տայոց» (Պատմ., էջ 60):

նել՝ թէ Ռշտունեաց կոտորածէն կ'ազատին նաեւ Մեհենդակ) ու Գարեգին Ռշտունիները, որոնց առաջինը՝ Վաղէս կայսեր դացող նախարարներու թուին մէջ է (Բուզ., էջ 109) ու երկրորդը՝ Վարազդատեան—Մանուէլեան պատերազմի առեւ կը սպաննուի (Բուզ., էջ 249. Հմմտ. եւ վերը): Իսկ Բուզանդի խօսքը՝ թէ սուրը հզեւրուն անգամ մերձեցաւ՝ կարելի է իբրեւ սաստկացուցիչ առնուլ եւ խորհիլ՝ թէ կոտորածը շատ անդորմ կերպով տեղի ունեցած ըլլայ<sup>15</sup>:

Վերոյիշեալ եզրակացութեան դալու շարժառիթն է ժամանակը — հայ թագաւորներու ընկալեալ տարիներու (այս է՝ թուականներու) եւ իրերու յաջորդութեան ընթացքը:

- Կը թագաւորեն՝
- Տիրան՝ 342—350<sup>16</sup>:
- Արշակ՝ 350—369:
- Պապ՝ 369—374:
- Վարազդատ՝ 374—377:

(Հ. Յ. Գաթրճեան, Տիեզերական Պատմութիւն, Բ., էջ 487—515 եւ Հ. Ս. Տէր Մովսէսեան, Պատմութիւն Հայոց, Բ., էջ 28—80:)

Արդ եթէ Տիրան 345էն առեւնները կոտորեց Ռշտունիները՝ նոյն ժամանակ դեռ կաթնակեր Տաճատի մը որդին Մեհենդակ եթէ ունեցած էր որդի — ամէնէն ուշը — 369ին չէր կրնար Վաղէսի երթալ — զի մանուկ մանկատի էր: Գարձեալ՝ նոյն շրջանին դեռ կաթի կարօտ Տաճատի մը զաւակը՝ Գարեգին — եթէ ունեցած էր այդ անունով որդի մը — չէր կարող Վարազդատեան — Մանուէլեան պատերազմին մասնակցել ու անկէ յառաջ ալ Համազասպուհի հետ ամուսնանալ:

Համանման է եւ Արծրունիներու պարագան: Շաւասպ Արծրունիին իր տոհմին — 345ին — կոտորածէն միակ կաթնակեր մնացորդն է (Բուզ., էջ 118), որ չարամիտ քան

<sup>15</sup> Չոյզ նախարարութիւններու ջնջումի մասին Հմմտ. նաեւ Գարազաշեան, Քննական Պատմ., Բ., էջ 35—36 եւ Markwart J. Südarmanien und die Tigrisquellen, nach griechischen und arabischen Geographen. Wien 1930, էջ 59\*—61\*:

<sup>16</sup> Այս թագաւորներու եւ անոնց նախորդներու ժամանակները ու անոնց վերաբրուած զեպրեր կարեւոր փոփոխութիւններու կենթարկուին, երբ օտար պատմագրութիւնը եւս նկատի առնուի եւ պէտք է նկատի առնուլ (Հմմտ. Գաթրճեանի Տիեզ. Պատմ., Բ., էջ 481—515 եւ Հ. Ն. Ալիկեան, Միւթաք Տօնագիրք, Վիեննա 1949, էջ 27, որ եւ օտարագրի թագաւորներու եւ հայ կաթողիկոսներու զհակալութիւններու ժամանակները):

նախորդ հայր մարդպետները՝ Հայր Մարգարեանը նետահար ընելով՝ կը սպաննէ (Արշակ թագաւորի օրով)։ Համարինք ամէնէն ուշը 369ին, երբ 24 տարեկան էր։ Ուստի եւ ի՞նչ խորհիլ, երբ Արեղեան կը գրէ՝ «Այս Շաւասպի որդին է անշուշտ Մերուժանը, որի կատարած չարիքները մանրամասն պատմում է Փաւստոսը» (Թրգմ. նոյնին պատմութեան, Երեւան 1947, էջ 326) եւ այլուր՝ «Մերուժան Շաւասպի որդին էր (անդ, էջ 342)։ Կարելի է մտածել՝ որ 345ին մանուկ Շաւասպի մը որդին Արշակի օրով այնքան հայրենագաւ գործեր ընէր եւ երեւան գար իրրեւ գոռ ու ճարտար մարանչող։ Եւ նա Մերուժան Մանուէլ Մամիկոնեանի հետ Աւանի մերձ կ'ոգորի ու Բարդէն Սիւնիէն կը սպաննուի։ Անոր գլուխը մարմնէն կը բաժնեն ու Հայոց Չարմանգուլիս թագուհիին բանակը կը բերեն։ Անոր շուրջը հաւաքուած ատիկները կը կարծեն՝ թէ Սամուէլ Մամիկոնեանի գլուխն ըլլայ։ զի Սամուէլ ու Մերուժան իրարու շատ նմանութիւն ունէին եւ երբ կը ստուգուի թէ վերջինին է, կ'ըսեն — Մեր եղբայրն է։ Կը շեշտուի խնամիութիւնը (Բուզ., էջ 263)։

Այս ամէնէն կարելի է շատ հաւանական երբակացութիւն հանել՝ թէ Ռշտունիներէն (ու Արծրունիներէն) բաց ի Տաճատէն (ու Շաւասպէն) ուրիշ ազատուածներ ալ եղած են եւ կամ ժամանակի անջրպետը պէտք է՝ ընդլայնել ու այնպէս իրերը մեկնել ու դաւազանաձառը կազմել — աւելի ճիշդաւոր։

Բաւական ժամանակ յետոյ՝ Վարդանանց շրջանին՝ մինչ Ռշտունեաց դաւառին եկեղեցական դասը՝ գլխաւորուած Սահակ եպիսկոպոսով եւ վերջաւորուած Քաջաջ սարկաւազով՝ հաւատքի ու նմանապէս ազգային ազատագրումի համար միաշունչ ու համամիտ կը գործէ եւ արիւնէ չ'երկնչիր, իշխանական տունը բաւական տարբեր ընթացք կը բռնէ։ Այդ ժամանակ Ռշտունիներէ յականէ յանուանէ կը յիշուի՝ Արտակ։ Անոր անունը Արտաշատի ժողովին (449) մասնակցողներու ցանկին մէջ չկայ, ուստի եւ կարելի է ենթադրել՝ որ նա բացակայ էր, զի ներքին չէ մտածել թէ այսպիսի տոհմի մը ներկայացուցիչը անիշխատակ ձգուած ըլլայ։ Մանաւանդ որ Փարպեցին ու Եղիշէն անոր անունը չեշտած են Պարսկաստան գացող նախարարներու շարքին մէջ (Փարպ., էջ 144, Եղիշէ, էջ 76)։

Հայ աւագանիին Հայաստանի մէջ դաւաճած ամուր հաւատքը՝ Պարսկաստանի մէջ կը տկարանայ՝ «Միաբանեալք ամենեքեան յանձն առնուին կատարել խարէութեամբ զհրաման թագաւորին եւ երթեալք ի տուն մոխրանոցին կէսքն ի նոսա ցուցանէին, այլ ոչ ամենեքեան, զպատճառանօք եւ ոչ ճշմարտութեամբ զխոնարհումն գլխոց իւրեանց սեռոտի պաշտամանն։ Եւ ոմանք թէպէտ եւ զիտէին զանյարական գլորումն, այլ ցանկացողք աշխարհին փառաց՝ փոխանակեցին զփառս անեղծին Աստուծոյ ընդ եղծանելի եւ անցաւոր կենաց աշխարհիս» (Փարպ., էջ 165)։ Այս վերջին դժբախտներու խումբէն է — Եղիշէի աւանդութեան համաձայն (էջ 172—173)։ — Արտակ Ռշտունի, որ Վասակ Սիւնի մարդպանին ծրագրներու հետեւող ու անոնց գործադրութեան հետամուտ է։ Սակայն թէ Աւարայրի ճակատամարտին (451) Վասակեան ու պարսկական բանակին մէջ գտնուած ըլլայ, այդ չէ յիշուած։ Բայց ուխտապահ Վարդանաններու թեւ ու թիկունք կ'ըլլայ «Չորքն Ռշտունեաց» (Եղիշէ, էջ 172—173. Թ. Արծ., էջ 78. Ալիշան, Այրարատ, էջ 428)։

Ղ. Փարպեցին Արտակի համախոհութիւնը Վասակի հետ<sup>17</sup> (էջ 209) եւ Ռշտունիներու մասնակցութիւնը Տղմուտ գետի մերձ մղուած պատերազմին մէջ՝ առանց յիշատակութեան կը թողու (էջ 225—227)։ Նաեւ ոչ Փարպեցին եւ ոչ Եղիշէն սոյն պայքարէն յետոյ կալանաւորուած ու Պարսկաստան տարուած նախարարներու ցանկին մէջ Ռշտունիի անուն ներհիւսած են (Փարպ., էջ 326—327, 273. Եղիշէ, էջ 369)։ Չոյք Պատմագիրներու աւանդածներէն այնպէս կը թուի՝ թէ Վարդանեան շրջանի Ռշտունեան նախարարութիւնը ժամանակին տաղնապաշտ հարցներն շուրջ շատ հետաքրքրութիւն չի ցուցներ եւ աւելի բացասական գիւրքի մէջ կը մնայ։

<sup>17</sup> Վասակուականէն, որուն դաւաններէն էին Ռըշտունիք, Պարսկիք եւ Աղէ, հաւատուրաց եւ Վասակեան քաղաքականութեան համամիտ կը յիշուի «Իշխանն Պարսկեաց Վարազշապուհ», որ Աւարայրի ճակատամարտէն յետոյ Հմայեակ Մամիկոնեանի ղեմ ուղղելու բանակին գորազուի կը գրուի Արտակն Գարեգեանի հետ (Ղ. Փարպ., էջ 135, 209, 231. Եղիշէ, էջ 137, 173)։ Մինչդեռ Արտակ Պարսկին Վարդան Մամիկոնեանին համախոհ է եւ Աւարայրի պատերազմին մասնակց է 57 մարտիկով կը նահատակուի (Եղիշէ, էջ 185 եւ 225)։ Իսկ Աղէպեցիներէն ուխտադրուած է Ընջուզ, մինչդեռ սոյն տոհմէն ուրիշներ Տղմուտ գետի մօտ հաւատքի համար կը կռուին (Եղիշէ, էջ 173 եւ 186)։

Նմանապէս Վահանեան շրջանին՝ Ռշտունիները անտարբեր գիւրք կը բռնեն եւ Վահանի հրաւերին չեն հաճիր ընդառաջել (Փարպ., էջ 410 եւ 412)։ Հարկաւ եղած պիտի ըլլան կարեւոր պատճառներ, որոնք Ռշտունիները այս ժամանակներու քաղաքական գործունէութենէ հեռու պահած են ու պանծնք կրօնական ու ազգային շահերը պաշտպանելու չեն մղած։ Նաեւ՝ չէզոք մնալու յորդորած։ Սակայն Ռշտունի նախարարութեան հաւատքի հանդէպ բռնած գիւրքը այնքան բացասական չէ եւ մանաւանդ թէ գովելի, երբ նկատուի՝ որ անոր ներկայացուցիչները կան Աւարայրի ճակատամարտին վրայ եւ Մանանիի Ռշտունի Ատովմեանց հետ կը նահատակուի եւ Ուխտապահ վանքին մէջ անոր նշխարները կ'ամփոփուին։ Նա Շահապիվանի ժողովին ալ ներկայ է եւ (որ հետաքրքրական է) իրրեւ «սպարապետ» կը յիշատակուի (Հ. Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 519. նոյնը՝ Հայաստանում, Վենետիկ 1901, Բ., էջ 160. Հ. Մ. Աւագեան, Լիակատար Վարք եւ վկայարանութիւն սրբոց, Բ., Վենետիկ 1811, էջ 66—76 եւ 89. դարձեալ՝ Գնունիներու մասին գրած յօդուածս. Հմմտ. եւ Հանդ. Ամս. [Միխիթար Տօնազիթը], 1949, էջ 79—170. Շահապիվանի ժողովի կանոնները, ուր էջ 90՝ Հ. Ն. Ակիւնեան կ'արտայայտուի «Բ. եւ Լ. օրինակներու մէջ պահուած է այն հատուածը, որ ժողովի մասնակցից եպիսկոպոսներու, երէցներու եւ իշխանաց անունները կը յիշուին, որ հաւատք չ'ենեղծչեր հարազատ, սկզբնապէս մաս համարելու»։ Բանասէր Հօր այս սողերը նկատողութեան արժանի են)։

Լէօ՝ Ռշտունի ու Սորիստունի նախարարութիւններու պտուակտուածը — մասով մը՝ Վարդանի եւ մասով մը՝ Վասակի կուսակից — նկատի ունենալով՝ կը գրէ «Այս՝ պարզապէս ցոյց է տալիս, որ միեւնոյն տոհմի իշխողները ստացել էին կամ պիտի ստանային Պարսից կառավարութիւնից աւելի պատիւ եւ կարուած եւ այս՝ ի հաշիւ միւս մասի տոհմակից միւս իշխանի։ Այսպիսի միջոցներով մտեղծուած այն երկպառակտուած դրութիւնը, որ նոյն Եղիշէն ներկայացնում է այսպիսի խօսքերով «Չնախարարեանն բանսարպիսի խօսքերով «Չնախարարեանն բանսարպիսի խօսքերով» (Պատմ. Հայոց, Բ., Երեւան 1947, էջ 57)։ Հ. Ն. Ակիւնեան այս նկատմամբ կը գրէ՝ «Չարմանալի է սակայն Սմբագիրը։ Անիկա Ռշտունեաց իշխանը

կը ներկայացնէ համամիտ Վասակայ, բայց զօրքն Ռշտունեաց կը կռուի Աւարայրի առջեւ իրրեւ Վարդանայ գինակից...։ Յայտնապէս կը տեսնուի թէ Սմբագիրը Սկզբնապէս մէջ նախարարներու բոլորովին ուրիշ խմբաւորում մ'ունէր քան զոր Ղազար կը ներկայացնէր 450ի համար» (Եղիշէ վարդապետ եւ իւր պատմութիւնն Հայոց պատերազմի, մատենադրական-պատմական ուսումնասիրութիւն, Բ. մասն, Վիեննա 1936, էջ 731—732 եւ Հմմտ. էջ 730)։

Հոս կարելի չէ աննկատ թողուլ թո՛վմաս Արծրունի Պատմագիրը։ Անոր աւանդութեան համաձայն Վարդան Մամիկոնեանին համամիտ ու անոր օգնական է Վահան Արծրունիի եւ Վահրիճ Անճեւացիի հետ՝ Տաճատ Ռշտունիին։ «Վարդան փութացայց զիւր պաղատանաց առ Տաճատ Ռշտունեաց տէր եւ առ Վախրիճ Անճեւացեաց տէր զեկուցանել նոցա զեղեարսն։ Եւ նոքա թափառակի<sup>18</sup> անյապող հանդերձ իւրաքանչիւր զօրու եկին առ մեծն Վարդան... եւ յանկարծօրէն յեղարկարձ արազութեամբ հասին ի վերայ Շահասպայ եւ մարդպանին Վնդոյի...։ Իսկ Տաճատ եւ Վախրիճ ի մէջ փակեալ զմարդպանն եւ զորդի նորա զՇիրոյ ձերբակալ արարեալ ածեն ի Դուին եւ հուր կրակարանին բորբոքեալ աստուածակէզ արարին զնա Որմզդական մեհակնին եւ զՇիրոյ կախեն զփայտէ ի վերայ կրակարանին եւ զարսն գետալէժս եւ սրախոզս արազեալ վատնեն... եւ ինքեանք գտնան յաղթութեամբ» (Պատմ., էջ 78)։

Թո՛վմաս Արծրունիին այս ու ստոր նման պատմածները իրրեւ թէ Արրահամ Սոսոտովանդի «Համպոտութիւն»ի եւ Եղիշէի մէջ գտնուած ըլլան ու յետոյ չարամտութեամբ (Բարձուճայի) դուրս» հանուած։ Այս մասին բաւական շատ արդէն գրուած է. Հմմտ. Երկրագունդ 1888, էջ 14—26. Բ. Վ. Կիւլեւսկեան, Եղիշէ քննական ուսումնասիրութիւն, Վիեննա 1909, էջ 118—133. Հ. Ն. Ակիւնեան, Եղիշէ վարդապետ, Ա., Վիեննա 1932, էջ 21 եւ Բ., Վիեննա 1936, էջ 772—773. Լէօ, Պատմ. Հայոց, Բ., էջ 47 եւ Քասունի Եղիայի յօդուածը «Հասկ» Ամսաթերթի մէջ 1951, էջ 47—53, ուր նա այս պատմութեան ներքին Վարդանանցին (572) հանդիպած կրնան եղած ըլլալ, կը համարի։

<sup>18</sup> Սրբագրելի՝ փութանակի (Հասկ, ամսաթերթ, 1951, էջ 48)։

Վարդանան - Վահանան շրջաններէ վերջ՝ Բարգէն Ա. Կաթողիկոսին (490—516) Պարսկաստանի եպիսկոպոսներու դրած թղթին ստորագրողներէն մին է՝ Ասրնբաեի Ռշտունի նախարարը (Գիրք Թղթոց, էջ 42)։ Այսպէս՝ միայն իր անունը հասած է մեզի։

Ժամանակի երկար անջրպետէ յետոյ Մժէժ Գնունին իշխանութենէն ետքը՝ Հաստանի վրայ մարզպան կ'ըլլան Պարսիկներ, որոնցմէ Դենշապուհ, ինչպէս կը հաստատուի Ասողիկ, «ՁՈրմզդական հուրն վառեաց ի Ռշտունիս եւ ստիպէր զքրիստոնէայս կրակի երկրպագանել, յաղագս որոյ բազումք մեռան» (Պատմ., էջ 84), սակայն լուծ է նախարարին (Ռշտունի) անունը, որուն ատեն այդ կատարուած է։

(Շարունակելի։)

Հ. Հ. ՈՍԿԵՍՆ

**ԳՐԻԳՈՐ Վ. ՇԻՐՈՒՆԵՅԻ, ԿՈՉՈՒՆԺ ԲԵՂԻՇԵՅԻ, ՅՈՐՋՈՐՋՈՒՆԺ ԵՂԹԵՆԵՅԻ, ՊԵՏՐՈՍԵՅԻ ԵՐՈՒՍԵՂԻՄԻ**

Հ. Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, Գ. 770 կը ներկայացնէ Գրիգորը հայրենեօք «Շիրուանցի կամ Շիրակի վանցի», որ ապա կոչուեցաւ «Բաղիշեցի»։ Թէ ի՞նչ աղբիւրէ քաղած է Չամչեան իր տեղեկութիւնները, ինձի ծանօթ չէ. բայց կ'երեւայ թէ այս կէտի մէջ պղտոր եղած է իր աղբիւրը, վասն զի չէ կրցած անկէ ճշդիւ դուրս կորզել տեղանունը. «Շիրուանցի կամ Շիրակուանցի» դժուարաւ կը շողկապուին «կամ»ով։ Յաջորդ շրջանի պատմագիրները իւրացուցած են «Շիրուանցին», առանց մատնանշելու Շիրուանի տեղը աշխարհագրութեան մէջ. այսպէս ի մէջ այլոց Մ. Օրմանեան, Ազգապատմ., Բ., § 1910, 1924։ Առաջին անգամ Տ. Սաւարանեանց եղաւ, որ նոյնացուց Շիրուանը Աղուանից աշխարհին հետ. «սա Աղուանից կամ Շիրուանի երկրէն էր, ուստի եւ կոչուեցաւ Շիրուանցի» (Պատմութիւն Երուսաղէմի, Բ., էջ 690)։ Այսպէս նաեւ Մ. Սմբատեանց, որ նոյն իսկ Գրիգոր Վ. Շիրուանցին համարեցաւ Սաղիանի Ս. Ստեփանոս վանքի վանահայրերէն մէկը. «Գ. Վ. Շիրուանցի 1707։ Սա յուստ գնալով ի Ս. Կարապետ վանս Մշոյ՝ մնացեալ է անդ ց1721

ամն. յորում ամի Յովհաննէս պատրիարքն Կ. Պոլսոյ հաստատելով զԳրիգոր վարդապետն պատրիարք Երուսաղէմի՝ առաքեալ է անդ, որ եւ յայտնի է Շղթայակիր անուամբ» (Նկարագիր Ս. Ստեփանոսի վանաց Սաղիանի, Տիփլիս 1896, էջ 33)։ Սրբազանը պատմութիւն շինած է փոխանակ գրելու։ Իրեն հետեւած է Մ. Աղաւունի, Միաբանք եւ այցելուք հայ Երուսաղէմի, էջ 83։

Գրիգորի ծննդավայրն Շիրուան հարկ է փնտռել Բաղէշի շուրջը։ Արդեամբք ալ Հ. Ղ. Ինձիճեան, Նոր Հայաստան, էջ 180 կը մատնանշէ «Շիրուան. Կիբան կամ Կիրկան։ Են դաւառք բարերերք ի հարաւակողմն Բաղիշոյ. որք մերթ լինին զիճակք ընդ տէրութեամբ պէյի այլոց գաւառաց. բերեն աղզս աղզս պտղոց. եւ առաքեն աստ եւ անդ եւ ի Բաղէշ»։ Ուստի Շիրուան գաւառիս համանուն քաղաքի կամ աւանի ծնունդն է Գրիգոր։ Որովհետեւ գաւառս մասն կը կազմէր հին Աղձնեաց նահանգին եւ նոր Բաղէշ նահանգին, կարող էր, ինչպէս Սողեցեցի նոյնպէս ինքը իրեն Շիրուանցի<sup>1</sup>, նաեւ Բաղիշեցի յորջորջուիլ։ Իր ծնողքն են Աւետիս քահանայ եւ Սատա<sup>2</sup>. կը յիշուի իր եղբայրն Պետրոս, որ 1687ին արդէն հանգուցեալ էր։

Գրիգոր ծնած է 1670ին. Արրահամ Գեղեցի կը գրէ. «Մեծ վարդապետին (այսինքն Գրիգորի) ծննդեան թիւն՝ ՌժԺԹ» (էջմ. 737, թղ. 248բ)։ Աշակերտած է ան Վարդան Բաղիշեցոյ Ամիրտուղի վանքին մէջ ասկէ կոչուած է Բաղիշեցի, իսկ ինքը նախընտրած է անուանել ինքզինքը «յԱմրտուղու վանաց» եւ կամ Ամիրտուղի, ինչպէս կը տեսնուի իր Մեծ եւ Փոքր կնիքներու վրայ (Տէր-Յովհաննէսեան, էջ 434)։ Գաւաղանի իշխանութիւնը առած ըլլալու է իր 1700ին։ Պէտք չէ շփոթել զինքը միւս Գրիգոր Վ. Բաղիշեցոյ հետ, որ վարդապետական իշխանութիւնը առած էր 1680ին։ Ունինք Գրիգոր Շիրուանցիէն յիշատակարաններս Բաղէշի շրջանէն.

Գրիգոր Տաթևացոյ Քարոզիչք, Չմոսն հատոր, գրուած Յովհաննէս Վ. Կոլոտի համար ՌժԼԶ (1687) թուին. «Գծեցաւ... ի

<sup>1</sup> «Գրիգոր Շիրուանցի» 1699ին կազմած է Առաքելոց վանքի ճաշոցն ի Մուշ։ Իր տաղերու վերնագրերէն մէջ յիշուած է երեսն «Շերվանցի» (տես վարդ.)։

<sup>2</sup> Այսպէս իր ինքնագիր Յիշատակարաններու մէջ 1687ին եւ 1703ին։ Երուսաղէմի թ. 1464ի մէջ Արրագրիչն ծնողներն են. ուստի կը սխալի հոս Մ. Աղաւունի (անդ, 83)։

քաղաքս Բաղէշ... ի խնդրոյ Յովհաննէս վարդապետի ի վայելումն անձին իւրոյ եւ յիշատակ բարի ծնողաց հօրն Տատուրին եւ մօրն Մարիամին եւ եղբօրն Սարգսին եւ քերցն իւրոց Մարիամին, Ասմին եւ այլոցն։ Արդ... յիշեցէք ի Գրիգորս զՅովհաննէս սրբաանեալ վարդապետն, զաշակերտն Մեծին Վարդանայ Բաղիշեցոյ... եւ զիս զանարժան Գրիգոր զբիւս եւ զմիւս ծեր տէր Գրիգորն, որ օգնեց ինձ եւ հասոյց յաւարտ։ Եւ զհայրն իմ զտէր Աւետիս քահանայն եւ զմայրն իմ զՍատայ, նաեւ զհանգուցեալ եղբայրն իմ զՊետրոս եւ զուսուցիչն իմ զՎարդան վարդապետ եւ զհօկող թղթիս զՂազարն» (էջմ իւրեմ, թ. 2078)։

1699ին հաւանօրէն ի Տարօն գրած է յիշատակագրութիւնս. «Կազմեցաւ ձեռագիր ճաշոցս Ս. Առաքելոց ձեռամբ Շիրվանցի տէր Գրիգոր վարդապետին. թվին ՌժՈԼ» (Գեղամ Տէր-Կարապետեան, Ձեռագիրք Տարօնի)։

Եւ 1703 ալ Տօնապատճառ գիրք մը կ'օրինակէ «Ձեռնուս օժանդակութեամբ սուրբ ծերունի աստուածապատուեալ արհի եւ պանծալի քաջ բարուհապետ Վարդան աստուածարան վարդապետի...»։ Կը խնդրէ յիշել «զհամապատիւ ինքեան զձեռնասուն որդեակս իւր հոգեւոր՝ զեղբորորդին զՆերսէս վարդապետն եւ զայլ միահամուռ վարդապետս եւ զԿուսակրօն արեղբայրս (այսպէս)...» նաեւ զԳրիգոր Գրիգոր եւ զԾնողան՝ Աւետիս քահանայ եւ զՍարգս. «ի նահանգիս Բաղէշ կոչեցելոյ, ի թուականիս հայկազուն սեռի ՌժԺԲ (1703) ամին. ընդ հովանեաւ Ս. Յովհաննու Կարապետին մականուամբ Ամրտուղու վանք վերածայնելոյ, ի հայրապետութեան տեան նահապետի ամենայն Հայոց եւ ամիրապետութեան Սահաթ խանի...»։ Կը յիշուի Սահապետ վարդապետի եղբորորդին տէր Սահակ անուն (Հայաստան, 1852, թ. 101)։

Մեծին Վարդանի մահէն († 1704) ետքը հինգ միաբաններ կը հետանան վանքէն, առնոց հետ արեղաներ եւ սարկաւազներ, եւ կ'երթան Տարօն անդամադրուելու Գլակոյ վանքին։ Ասոնք են Գրիգոր Վ. Բաղիշեցի, Յովհաննէս Վ. Բաղիշեցի (Կոլոտ), Ներսէս Եպ. Արծկեցի, Արրահամ (քեռորդի Գրիգորի) եւ Յովհաննէս Բեղեցի վարդապետներ. առնոց հետ կը յիշուին նաեւ Գարբիէլ եւ Ստեփանոս, հաւանօրէն արեղաներ. որոնք որոշած էին ապրիլ ի միասին անրժան (1705)։

Յովհաննէս Կոլոտ կը գրէ. «Եւ յետ որոյ՝ վեհազն հովուիս մերոյ առ Տէր զնալոյ, ցրուեցան դատինք ողջամիտք եւ եղեն յերրու տատանման վասն զի գտաւ ո՛չ ընդ Մովսիսի՝ Յեսու. որոյ վասն եւ որդիքս հայրենամեօք՝ եղաք ի վարատման։ Լցեալ ուժգին արտասուօք որբացելոցս դէմք՝ դէմ եղեալ յերկիրն Տարօնոյ։ Չուեալ անտի իսկ — այսինքն Բաղէշէն — յԱպահունիս (Մանագիբաթ՝ ուղղութեամբ՝ հանդիպելու Խառաքասայլ եւ Մեծոփայ վանքերու) եւ անտի ի վաղարշակերտ՝ գնալով ի վիշապաձոր կոչեցեալ ուխտ Սրբոյն Թաթլոյ եւ Վարոսի (այժմեան Ալաշկերտ)։ Եւ անտի անցանելով զԳարեղինօք (Արշարունեաց սահմանակից կամրջաձորի վանքը այցելելու) եւ զԿրօք (հաւանօրէն Վանանդի Կարս քաղաքի վրայէն) մինչ ի վանքն Հոռոմոսի (Շիրակի մէջ)։ Եւ առեալ անդ զսակաւ ինչ շունչ տեսութեամբ տաճարին Սրբոյ Մեծին Յօհաննու տեսաք ոչ սակաւ զմարդասիրութիւնս աղանիւս եւ յայլոց եկեղեցեաց ի գնացս մեր ամենայն. յաւել եւ զհրաւէրն լիովին, եթէ կացէք աստ. որոց զվարձս ամենից տացէ Տէր առատ։ Եւ ելեալ անտի... դարձաք առ ընդ կրունկն... եկեալ հասաք ի Յորժանք աստուածախնամ գիւղիկն» (Տարօնի), ուր կը զիմաւորեն գիրենք Գլակոյ վանքին Կարապետ եպիսկոպոսը եւ ժողովուրդը, «քանզի կարի սիրով ընկալան զմեզ՝ ժողովելով զմերս օտարութիւն» (Կոլոտ, 148—150)։

Կարապետ եպիսկոպոս կը յանձնէ Գլակոյ վանքին տեսչութիւնը եկող հիւրերուն, որոնք որոշած էին մնալ հոն իբրեւ միաբան։ Գրիգոր Բաղիշեցի կը կարգուի տեսուչ Տարօնի։ Արրահամ կը գրէ. «Իսկ յորժամ եղև առաջնորդ սուրբ Կարապետի վանացն՝ ՌժԺԳ (1704) թվին (էջմ. 737)։

Անմխիթար պայմաններու մէջ կը դըռնուէր վանքը։ Ընկճած էր պարտքերու տակ։ Շրջապատուած էր անոպայ ազգակիցներէ եւ այլազգիներէ։ Պարտատէրները կը պահանջէին պարտքերը. քուրդ պաշտօնեաներ կը հարստահարէին միաբանները. ազգայինք կը յարուցանէին դժուարութիւններ։ Յովհաննէս Կոլոտ այսպէս կը նկարագրէ կացութիւնը. «Այլ զՄարաց (այսինքն Քրդաց) անգուր լինելն եւ զարիւնս մեր ծծելն անասելի է։ Քանզի սատանայ, որ բնիկ ներձակն է բարեկարգութեան, ի մարտ (եւեալ էր) ընդ սրբոյ Տանն այնորիկ իւրովքն համախոհութեւ»։